ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-25/1-1

ք. Երևան « 5 » փետրվարի 2025 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Գեվորգիան Կոնցեռն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վլադիմիր Գևորգյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **101 985 600 (Մեկ հարյուր մեկ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Գեվորգիան Կոնցեռն» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Ստեփանավան, Չարենցի 179-28
Կառավարական տուն, 1	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 20500225897310 01
ՀՎՀՀ	ՀՎՀՀ 06952546
ՀՎՀՀ 02505554	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 5 » փետրվարի 2025 թ. կնքված
«ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-25/1-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951100/512	**«Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում ծառայությունների ձեռքբերում, այդ թվում՝ միջոցառումների հետ կապված ծառայություններ.** **Միջոցառումը պետք է կազմակերպել 2025 թ. հունիսի 6-ից օգոստոսի 27-ը՝** 6 փուլով. • 1-ին փուլ - հունիսի 6- հունիսի 18 • 2-րդ փուլ - հունիսի 20 - հուլիսի 2 • 3-րդ փուլ - հուլիսի 4 - հուլիսի 16 • 4-րդ փուլ - հուլիսի 18 - հուլիսի 30 • 5-րդ փուլ - օգոստոսի 1- օգոստոսի 13 • 6-րդ փուլ - օգոստոսի 15- օգոստոսի 27 Միջոցառմանը կմասնակցեն տարբեր երկրներից ժամանած 13-18 տարեկան սփյուռքահայ երիտասարդներ և պատանիներ: **1. Ճամբարի ծառայությունների մատուցում 6 փուլի համար՝**	դրամ	101 985 600	1	Համաձայն տեխնիկական բնութագրի	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից համաձայն տեխնիկական բնութագրի:

		• **Առավելագույնը 648 անձ (600 մասնակից, 36 ջոկատավար, 12 մշտադիտարկող):** • **Յուրաքանչյուր փուլում մասնակիցների թվաքանակը կարող է փոփոխվել՝ ըստ ներկայացված հայտերի, սակայն ընդհանուր մասնակիցների թիվը 6 փուլի համար կլինի առավելագույնը 600:** • **Յուրաքանչյուր փուլում մասնակիցների թվաքանակը կարող է լինել առնվազն 50 և առավելագույնը 150 մասնակից: Մասնակիցների թվաքանակով պայմանավորված՝ կլինեն համապատասխան թվաքանակով ջոկատավարներ և մշտադիտարկողներ:** **Վճարումները կիրականացվեն ըստ փուլերի՝ փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա:** Ճամբարի գտնվելու վայրը՝ Երևան քաղաքից առավելագոույնը 100 կմ. հեռավորության վրա (Հայաստանի Հանրապետությունում): Ճամբարը պետք է վերանորոգված լինի առնվազն վերջին հինգ տարիների ընթացքում, ապահովված լինի մշտական տաք և սառը ջրով, լվացքատնով (առնվազն 2 լվացքի մեքենա, առնվազն 3 արդուկ), սենյակներում լինեն առանձնացված լոգասենյակներ և սանհանգույցներ: Լոգասենյակները պետք է ապահովված լինեն անհրաժեշտ պարագաներով, լվացման միջոցներով, սրբիչներով և համապատասխանեն սահմանված սանիտարական բոլոր նորմերին: Ճամբարի կահույքը պետք է լինի լավ վիճակում, պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող անվտանգության նորմերին և բացառվեն անսարքությունները: Ճամբարը պետք է ապահովված լինի համապատասխան ճաշասենյակներով, սպասքով, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող սանիտարահիգենիկ նորմերին: **Ճամբարը պետք է մատուցի շուրջօրյա անվտանգության և բուժօգնության ծառայություններ՝ ապահովելով առնվազն մեկ անվտանգության աշխատակցի և առնվազն մեկ բուժաշխատակցի ներկայություն: Կատարողը պետք է ապահովի ճամբարում՝ ջոկատավարների, մշտադիտարկողների ներկայությունը բոլոր փուլերին:**					

		Ճամբարում պետք է առկա լինի առաջին օգնություն դեղորայքային փաթեթ՝ գլխացավի, ատամնացավի, մարմնի բարձր ջերմության, ստամոքսի խանգարման, հակաալերգիկ, սրտխառնոցի, դիարեայի դեմ դեղամիջոցներ, ինչպես նաև բինտ, բամբակ, յոդ, ջրածնային պերօքսիդ, բժշկական սպիրտ, բժշկական սպեղանի (սանտավիկ) և ախտահանիչ միջոցներ (անհրաժեշտության դեպքում բժշկական դիմակներ): Ճամբարը պետք է ապահովված լինի ինտերնետ կապով: Ճամբարը պետք է ունենա խաղահրապարակներ և ապահովված լինի սպորտային ու մարզական խաղերի համար անհրաժեշտ առարկաներով (գնդակ, ցատկապարան, օղակ, կավիճ, սեղանի շախմատ, շաշկի և այլն): Ճամբարը պետք է ունենա դահլիճ, որը պետք է տեխնիկապես հագեցած լինի առնվազն 1 պրոեկտորով, առնվազն 2 խոսափողով, առնվազն 2 բարձրախոսով և առնվազն 1 դյուրակիր համակարգչով: Ճամբարը պետք է ունենա առնվազն 30 սենյակ՝ հագեցած անհրաժեշտ պարագաներով, յուրաքանչյուր սենյակում պետք է լինի առանձին մեկտեղանոց մահճակալներ՝ առավելագույնը 5 անձի համար՝ բացառելով երկհարկանի մահճակալները: Միջոցառման շրջանակներում դասընթացներն անցկացնելու համար ճամբարը պետք է ապահովված լինի համապատասխան դասասենյակներով՝ առնվազն 10 սենյակ, առնվազն 15 անձի համար: Սենյակները պետք է հագեցած լինեն մագնիսա-մարկերային և/կամ ֆլիպչարտ թղթի գրատախտակներով և գրատախտակի համար մարկերներով: **2. Հանրային սննդի կազմակերպում, այդ թվում՝** Ճամբարում 6 փուլի համար անհրաժեշտ է ապահովել օրական **երեք անգամյա սնունդ**՝ յուրաքանչյուր փուլի համար՝ առնվազն 50 և առավելագույնը **150** անձի համար (ճաշացանկը պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ): Յուրաքանչյուր փուլի օրական երեք անգամյա սննդի մատուցումը պետք է իրականացնել ըստ սահմանված ժամերի՝ **Նախաճաշ, ժամը՝ 8:00-10:00,** **Ճաշ, ժամը՝ 12:00-14:00,**					

		Ընթրիք, ժամը՝ 18:00-20:00 **Թեյախմություն՝ 21:00-22:00:** **Վերոնշյալ ժամերը կարող են փոփոխվել: Պատվիրատուի կողմից օրակարգը նախապես կհաստատվի և կտրամադրվի Կատարողին՝ ըստ փուլերի:** Մատուցվող սնունդը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում գործող սննդի անվտանգության նորմերին: Մատակարարվող սնունդը պետք է լինի թարմ՝ պատրաստված լինի նույն օրը, յուրաքանչյուր օր նոր ճաշատեսակով (Ճաշացանկը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ): Անհրաժեշտ է ապահովել հայկական խոհանոցին բնորոշ ճաշատեսակներ, այդ թվում՝ օրվա ճաշացանկի մեջ պետք է լինի՝ նախուտեստներ՝ թարմ հաց (լավաշ, մատնաքաշ), պանրի տեսականի, մսի տեսականի, ձիթապտուղ, սեզոնային թարմ բանջարեղեն, աղցաններ՝ առնվազն 2 տեսակի, հիմնական ուտեստներ՝ առնվազն 2 տաք ուտեստ և խավարտ, առնվազն 2 խորտիկ, կարագ, ջեմ/մեղր և այլ անուշեղեն, ըմպելիքներ և խմելու ջուր, թեյ, միրգ, խմորեղեն, պաղպաղակ: **Յուրաքանչյուր փուլում՝** մեկ անգամը, ճամբարից դուրս շրջայցի ընթացքում (Լոռու մարզ) ճաշի կազմակերում տեղում գործող սննդի սպասարկման կետում՝ առնվազն 50 և առավելագույնը **150** անձի համար /մասնակիցներ, ջոկատավար, բուժաշխատակից, գրասենյակի ներկայացուցիչներ/: **Շրջայցերի կազմակերպում** (6 փուլ)**, այդ թվում՝** շրջայցերի ընթացքում տրանսպորտային միջոցի տրամադրում (ավտոբուսների և /կամ միկրոավտոբուս) յուրաքանչյուր փուլում առնվազն 50 և առավելագույնը **150** անձի համար /մասնակիցներ, ջոկատավար, բուժաշխատակից, գրասենյակի աշխատակից, ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր-հայտի/: Միջոցառման շրջանակներում յուրաքանչյուր փուլում առնվազն 50 և առավելագույնը **150** /մասնակիցներ, ջոկատավար, բուժաշխատակից, գրասենյակի աշխատակից/ համար պետք է կազմակերպել շրջայցեր, մասնավորապես՝ **I օր** – Ք.Երևան (Վ. Սարգսյան 3) - ճամբար: **II օր** - Ճամբար - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (ք. Երևան) - Օշական - ճամբար:					

		III օր - Ճամբար - ՀԲԸՄ վիրտուալ համալսարան (ք.Երևան) - «Հայոց ցեղասպանության թանգարան» և հուշարձան (ք.Երևան) - ճամբար: **IV օր** - Ճամբար - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն (ք.Երևան) - «Այբ» դպրոց (ք.Երևան) - ճամբար: **V օր** - Ճամբար - Հայաստանի պատմության թանգարան (ք.Երևան) - Խոր Վիրապ - ճամբար: **VI օր** - Ճամբար - Գառնի - Գեղարդ - ճամբար: **VII օր –** Շրջայցեր չկան՝ մասնակիցները գտնվելու են ճամբարում: **VIII օր** - Ճամբար - Դիլիջանի միջազգային դպրոց, (ք.Դիլիջան) - Հաղարծինի վանական համալիր - Մ. Մելքոնյանի անվան վարժարան (ք. Դիլիջան) - ճամբար: **IX օր** - Ճամբար - Սարդարապատ - Էջմիածին – Զվարթնոցի հուշարձան (Արմավիրի մարզ) - Ճամբար: **X օր** - Ճամբար - Սևանավանք (Սևանի թերակղզի) - «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոն (Լոռու մարզ) - Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան (Լոռու մարզ, գ. Դսեղ) - ճամբար: **XI օր** - Ճամբար - Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան (ք.Երևան) – Եռաբլուր (ք.Երևան) - ճամբար: **XII օր** - Շրջայցեր չկան՝ մասնակիցները գտնվելու են ճամբարում: **XIII օր** - Ճամբար - Երևան: **Ժամանակացույցը, մասնակիցների թվաքանակը և ուղերթները Պատվիրատուի կողմից նախապես կհաստատվի և կտրամադրվի Կատարողին՝ ըստ փուլերի:** Յուրաքանչյուր փուլում, անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուն կարող է կատարել օրակարգում փոփոխություններ, ինչի մասին նախապես կտեղեկացվի Կատարողին: Մասնակիցների դիմավորում և ճանապարհում՝ «Զվարթնոց» օդանավակայանից – ճամբար և հակառակը՝ առավելագույնը 50 ուղերթ: Հյուրերի և մշտադիտարկողների տեղափոխում Երևան – ճամբար - Երևան՝ առավելագույնը 12 ուղերթ, յուրաքանչյուր ուղերթին՝ առավելագույնը 30 անձի: Ժամանակացույցը Պատվիրատուի կողմից նախապես կհաստատվի և կտրամադրվի:					

		Անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի պահանջով, շրջայցերի օրերն ու ուղղությունները կարող է փոփոխվել, պահպանելով վերոնշյալ ուղղությունների հեռավորությունները՝ մեկնարկային կետ սահմանելով ճամբարի գտնվելու վայրը: Վերը նշված բոլոր շրջայցերը պետք է իրականացվեն սարքին և մաքուր վիճակում գտնվող, հարմարավետ տրանսպորտային միջոցներով՝ ավտոբուսներ, և/կամ միկրոավտոբուսներ՝ ըստ մասնակիցների քանակի, որոնք պետք է հագեցած լինեն օդակարգավորման համակարգով, սառնարաններով, բարձրախոսով, ամրագոտիներով: Տրանսպորտային միջոցի՝ ավտոբուսների, և/կամ միկրոավտոբուսների, տեխնիկական անսարքության դեպքում այն պետք է փոխարինվի համանման այլ տրանսպորտային միջոցով՝ առավելագույնը 1 ժամվա ընթացքում: Տրանսպորտային միջոցները պետք է լինեն առնվազն 2018 թվականի և/կամ բարձր տարեթվի արտադրության՝ անվտանգությունից ելնելով: Շրջայցերի ընթացքում բոլոր մասնակիցների համար անհրաժեշտ է ապահովել 0.5 լիտր սառեցված վիճակում շշալցված խմելու ջուր (յուրաքանչյուր անձի համար առնվազն 2 շիշ, ընդհանուր՝ 6 փուլի համար՝ ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված թվաքանակի: Շրջայցերի ընթացքում մասնակիցներին կուղեկցի **առնվազն 2 բուժաշխատակից՝** առնվազն մեկ բժիշկ և մեկ բուժքույր (առաջին անհրաժեշտության բուժօգնության միջոցների առկայությունը պարտադիր է), որոնց ներկայությունը կապահովվի Գրասենյակի կողմից: **3.Տեսանկարահանման և լուսանկարահանման ծառայություններ, այդ թվում՝** Կատարողը պարտավոր է միջոցառման 6 փուլերի ընթացքում իրականացնել ընդհանուր առմամբ 60 օրերի ամբողջական տեսանկարահանում և լուսանկարահանում: Օրերի ընտրությունը և բաշխումը կատարում է Պատվիրատուն: Տեսանկարահանումը և լուսանկարահանումը պետք է իրականացվեն առանձին տեսանկարահանող և լուսանկարահանող կողմից: Տեսալուսանկարահանումները կարող են իրականացվել տարբեր վայրերում, ներառյալ ՀՀ մարզեր (տրանսպորտային և կեցության ծախսերը ներառված են արժեքի մեջ) և ոչ աշխատանքային օրերի և ժամերի: Տեսանկարահանումների հիման վրա Կատարողը Պատվիրատուին պետք է տրամադրի յուրքանչյուր օրվա նկարահանումները կոշտ կրիչով, ինչպես նաև միջոցառման ավարտից 30 օր հետո պետք է Պատվիրատուին տրամադրի միջոցառման վերաբերյալ ամփոփիչ ֆիլմը: Ֆիլմի տևողությունը պետք է լինի առնվազն 15 րոպե: Նախքան					

		նկարահանումների մեկնարկը Կատարողը պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել ֆիլմի նախնական սցենարային տարբերակը և կատարել Պատվիրատուի կողմից ներկայացված փոփոխությունները: Կատարողը պարտավոր է ապահովել ֆիլմի սցենարական պլանի 2 տարբերակների վերջնական մշակում, տեսանկարահանման նախագիծ/տեսանկարահանում, ֆիլմի մոնտաժ, երաժշտական ձևավորում, լրագրողական/հետկադրային տեքստի պատրաստում և ձայնագրում, ենթագրերի տեղադրում: Ֆիլմը պետք է Պատվիրատուին տրամադրվի առանձին անգլերեն և ռուսերեն ենթագրերով. թարգմանությունները պարտավոր է իրականացնել Կատարողը: Եթե ֆիլմն ունի լրագրողական տեքստը, Կատարողը նախապես պետք է այն համաձայնեցի Պատվիրատուի հետ: Կատարողը, ըստ Պատվիրատուի հետ ձեռք բերված համաձայնության, կտրամադրի նաև ֆիլմի անոնսային տարբերակը: Ֆիլմը/օրագրերի շարքը պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին՝ • Նկարահանումները 4k ֆորմատով, 25fps չափանիշներով • բոլոր տեսարանների անցումներում՝ ձայնային «ինտերշումի» գործածություն • տեսաֆիլմերում օգտագործվող երաժշտական կտորները՝ գնված և հեղինակային իրավունքի պահպանմամբ • պատկեր՝ վայրկյանում 30 կադր • լուսային սարքավորումների, ձայնային սարքավորումների, կցվող միկրոֆոնների ապահավում • տեքստ՝ ձայնի և պատկերի հետ բովանդակային և պատկերավոր առավելագույն պարզ համադրում, ձայնային, անիմացիոն, գրաֆիկական և այլ լուծումներով: Ֆիլմը պետք է ունենա վիզուալ փակում և բացում, ձայնային ձևավորում (շապիկ, բլյում և այլն): Անհրաժեշտության դեպքում Կատարողը կիրականացնի դրոնով նկարահանումներ՝ իր կողմից ձեռքբերված դրոնով նկարահանման թույլտվությամբ: Նկարահանումների ընթացքում Կատարողը պետք է ապահովի 2 տեսախցիկ՝ կադրին համապատասխան օբյեկտիվներով: Պետք է նկարահանվի միջոցառման ամբողջ առօրյան՝ դասանցկացման ընթացքը, շրջայցերը, հանդիպումները և այլն: Պատվիրատուն իրավունք ունի մինչև ֆիլմի վերջնական տարբերակի հաստատումը կատարել դիտարկումներ և փոփոխություններ՝ նախապես Կատարողի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն: Կատարողը պարտավոր է տրամադրել Պատվիրատուին ֆիլմի համար իրականացրած նկարահանումների չմոնտաժված ամբողջական նյութերը կոշտ կրիչով:					

		Լուսանկարահանումներից հետո յուրաքանչյուր հաջորդ օրվա ընթացքում Կատարողը պարտավոր է Պատվիրատուին տրամադրել նախորդ օրվա նկարահանումների մշակված լուսանկարները: Յուրքանչյուր օրվա համար Կատարողը պատվիրատուին պետք է տրամադրի առնվազն 30 մշակված լուսանկար և չմշակված մյուս լուսանկարները: Լուսանկարները պետք է. 1. Պարունակեն միջոցառման բրենդային տարրերը՝ միջոցառման լոգոյով իրերը (բաներ, նոթատետր, հագուստ և այլն) 2. Միջոցառման բոլոր մասնակիցների, հյուրերի, կազմակերպիչների խոշոր/պորտրետային պլաններով լուսանկարներ 3. Խմբերի միջին պլանով լուսանկարներ 4. Հավաքատեղիների, այցելած վայրերի ընդհանուր պլանները, որպեսզի ֆոտոյից հասկանալի լինի, թե որտեղ է իրականանում գործողությունը 5. Դասերի, հանդիպումների, այցերի ավարտին բոլոր մասնակիցների խմբակային պատկերները 6. Կարևոր է, որ մասնակիցները և հրավիրված հյուրերը նկարահանվեն խոշոր և միջին պլաններով: Լուսանկարները պետք է լինեն վառ և բնական գույներով, պատկերը պետք է լինի հստակ, լույսից չվառված: **Միջոցառման յուրաքանչյուր փուլի բացման (6) և փակման (6) արարողության համար ձայնային տեխնիկայի և բեմի ապահովում բաց տարածքում:** • Ձայնային տեխնիկան պետք է լինի առնվազն 10 կվտ. հզորությամբ՝ առավելագույնը 10 բարձրախոսով: • Բեմը պետք է լինի առնվազն 35 մ^2 (7մ.՝ երկարություն, 5մ.՝ լայնություն, 0.5մ՝ բարձրություն)՝ մետաղյա կոնստրուկցիաներով և ցանկացած լուսային էֆկտներով: Միջոցառման ավարտից հետո Կատարողը պետք է ներկայացնի Պատվիրատուին հաշվետվություն՝ մատուցված ծառայությունների վերաբերյալ՝ կցելով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: **Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ ըստ փուլերի *և մասնակիցների թվաքանակի:*** ***Առաջին վճարումը կիրականացվի 2-րդ փուլի ավարտից հետո: Հաջորդաթիվ վճարումը կիրականացվի հերթական փուլի ավարտից հետո:**					

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Գեվորգիան Կոնցեռն» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Ստեփանավան, Չարենցի 179-28
Կառավարական տուն, 1	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 20500225897310 01
Հ/Հ	ՀՎՀՀ 06952546
ՀՎՀՀ 02505554	
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
« 5 » փետրվարի 2025 թ. կնքված
«ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-25/1-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951100/512	Միջոցառումների հետ կապված ծառայություններ	... %	... %	... %	.. %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախապես վելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գեվորգիան Կոնցեռն» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179-28
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500022589731001
ՀՎՀՀ 06952546

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«5» փետրվարի 2025 թ. կնքված
«ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-25/1-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 5 » փետրվարի 2025 թ. կնքված
«ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-25/1-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն